Հայաստանի
Հանրապետություն
ք.Երևան
«Նորք - Մարաշ»
Բժշկական Կենտրոն ՓԲԸ

Республика
Армения
г.Ереван
Медицинский Центр
"Норк-Мараш" ЗАО

ՀՀ, ք. Երևան, Նորք
Ա. Արմենակյան 13
Հեռ. 650971; 650961
Ֆաքս (374 10) 65 38 69 կամ
65 0560

РА, г. Ереван, Норк
ул. А. Арменакяна 13
Тел: 65 09 71; 65 09 61
Факс: (374 10) 65 38 69
или 65 05 60

14.09.2016թ. No 08-343

<<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի
պետ պարոն Մ. Անանյանին

Հարգելի պարոն Անանյան

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-99/16 որոշման պահանջների կատարման մասին որպես տեղեկատվություն հայտնում ենք հետևյալը.

<<ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18>> ծածկագրով գնման ընթացակարգը ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ամփոփված է և ընթացակարգի շրջանակներում ընտրված բոլոր մասնակիցների հետ սահմանված կարգով և ժամկետներում կնքվել են գնման պայմանագրեր: Պայմանագրեր կնքած կողմերից որևէ մեկը ընթացակարգի շրջանակներում չի ներկայացրել կեղծ փաստաթղթեր կամ տեղեկություններ, չի բողոքարկվել նաև պայմանագրերի կնքելու մասին որոշումները, ուստի պայմանագրերը ստացել են իրավական ուժ:

Բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերումը <<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի համար անհետաձգելի և անհրաժեշտ կարիքի բավարարում է, ուստի հաշվի առնելով կենտրոնի ընդհանուր գերակա շահը Պատվիրատուն նպատակահարմար չի գտնում օգտվել ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 36-րդ կետի 8-րդ ենթակետով իրեն վերապահված իրավունքից և միակողմանի լուծել համապատասխան պայմանագրերը:

Սույն դիրքորոշումը վերաբերվում է նաև ԳԲԽ-103/16 բողոքարկման խորհրդի ընդունած որոշմանը:

Կենտրոնի տնօրեն՝ Լ.Կ.Մուրադյան